

**ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄԸ
ՀԱՅ ՊԱՏՄԱՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
(ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆ, ՍՏԵՓԱՆ ԶՈՐԵԱՆ)**

Ժողովրդի եւ մշակոյթի պատմութիւնը խորինակ ինքնագիտակցում պուգորութիւն է, այն էլ այնպիսի մի ժողովրդի համար, ինչպիսին մերն է, որի գրողը պգացել, դիտել եւ քննել է՝ տուեալ ժամանակաշրջանի առաջադրած խնդիրները աչքի առաջ ունենալով:

Մեր ժողովրդի ազգային-ապստոսական պայքարի վաղ շրջանում, 5-րդ դարի դասական մշակոյթի ձեւաւորման փուլում, հայ գրողը, հասարակական գործիչը, ժամանակի գաղափարախօսը, գեղագէտը հանդէս են գալիս նոյն կերպարի մէջ, որով խորհրդանշում են մեր մշակոյթի պատմութեան յետագայ դարերը: Ինչ-որ չափով խորաբանչիւր պատմաշրջան կրում է այս առանկոյթը: Սա նշանակում է, որ Խորենացուց մինչեւ Մաթեոսեան հայ գրողը իր ժամանակի գեղագէտ-տարեգիրն է, մտածող պատմաբանը, որով կանխորոշուել է հայ ժողովրդի հոգեւոր մշակոյթի վարդապետական ուղղութիւնը:

Հայ գրականութեան այս խրայատկութիւնը ճիշտ է բնութագրել դարասկզբին Վահան Տէրեանը՝ այն համարելով իբրեւ անբաժանելի յատկանիշ, որին չկարողացաւ յաղթահարել նաեւ 20-րդ դարի նորագոյն հայ գրականութիւնը: Այն, ըստ Տէրեանի բնութագրման «Մի ֆանտոմ է եղել, մի պօրութիւն, որը մղել է հերոսական մարտիրոսութեան, դէպի աներեւակալելի վարման հոգեւոր ու նիւթական էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի ցաւատանջ իղձ է դարձել այդ անկախ հայրենիքի, այդ ազգային գոյութեան գաղափարը»¹:

Մաքսաւան իր դարաւոր ուղին անցած ժողովուրդը արդէն դարասկզբին ապրելով իր ճակատագրի դառնութեան Մեծ եղեռնը, ստեղծեց իր իրական-միջական հայրենիքը, հոգեւոր հայրենիքը՝ Երկիր Նաիրին: Կուսակումների եւ ներսուսումների, հոգեկան լարումների այս շրջանում, երբ «Յեղին արտի» հեղինակը երաւում էր առաջ իր գրիչը «արտի մէջ թաթախել», Միսանկթոն հայրենի եպրեթի աղօթք-հրաւերն էր մրմնջում, Թումանեանը յղացաւ «հոգեւոր հայրենիքի» որոնման, պատմական-միջական (միրական) շերտերից յառնելու տեսութիւնը, որն ընթացաւ Զարենցի «Գիրք ճանապարհի» ազգային էութեան տրոհման, այնուհետեւ այն քննադէպաբանական խորքով մեկնաբանելու, կերպարորդելու անհատի, ազգի էութեամբ իբրեւ անորոշելի զաղափար, որ բազմաթիւ գաղտնագրեր են յայտնաբերում մանաւանդ 20-30-ական թուականների պատմութեան առնչութեամբ:

Պատմական շերտերի, գրականութեան պատմականութեան այս խնդիրը իւրովի լուծեց նաեւ հայ արձակը, մասնաւորապէս պատմավիպասանութիւնը: Ժողովրդի ինքնագիտակցութիւնը, ներխուժելով պատմութեան խորքերը, հայ գրողին՝ Զարենցին, Դեմիրճեանին, Զորեանին, միւսներին, տանելով դէպի պատմական փորձի, ինքնավերլուծութեան ուղիով, յայտնաբերում էր ժամանակի խնդիրների այլ եպրեթ ու հարցեր: Դրանց մէջ գլխաւոր, էական հարցը, ինքնուրոյնութեան համար ժողովրդի մղած պայքարում առաջին հերթին իր ներքին կարողութիւններին, իր սեփական հոգեւոր կենսաէներգիային ապաւինելու մտահոգութիւնն է, որի լուծումները տարբեր են ինչպէս Զարենցի «Երկիր Նաիրիում», Դեմիրճեանի «Վարդանանքում», այնպէս էլ Զորեանի պատմավեպերում, որոնց կ'անդրադառնանք առանձին համադրութիւններով:

¹ Վ. Տէրեան, Երկերի ժողովածու, հ. 2, 1961, էջ 251-52:

* * *

Ընթանալով թուացեալ ծանօթ շափոններով, սակայն, մենք աւելի յստակ ուղիներ կ'որոնենք հետեւեալ հանգամանքների բերումով: Նախ, մեր առաջադրած խնդիրը բազմիցս քննարկել է գրականագիտութեան պատմութիւնը, բայց վերլուծութիւնը իր տեքստային խորքում բազում կապեր է յայտնաբերում, որոնք կարիք ունեն պատմական նոր համակարգում աւելի ուղղահայեաց եւ ոչ զուգադիր քննելու, ուստի «արտատեքստային» վերլուծութիւնը այս դէպքում մեզ համար նշանակութիւն ունի, այնքանով, որ մեզ կը տանի գրողի կերպարի, նրա հոգեաշխարհի, պատմական-աշխարհայեացքային ընկալումների եւ պատմագիտական վերլուծութեան ճանապարհով:

Նորագոյն շրջանի պատմավիպասանութիւնը այս առումով հարուստ նիւթ է ներառում, որն ունի պատմա-գործառական արժէք իր նշանակութեամբ: Նրա տրամաֆորմացիան (փոխակերպումը) լայն դիտարկումով նշանակում է գոյաբանական խնդիրների, ազգային կենսական հարցերի վերհանում եւ պարզաբանում, որն իր ժամանակի եւ տարածութեան ըմբռնումով որքան կոնկրետ է, նոյնքան պատճառական մի շրթայակցութիւն, որի խրաքանչիւր կէտ կամ բեւեռ սկիւբ է, շարունակութիւն, եթէ կ'ուզէք, խրաքանչիւր կէտ հակադրամիասնութիւնն է նոյն երեւոյթի էութեան, միաժամանակ առարկայական: Պարագայականը այս իմաստով սուկ առնչում է գրողի ընտրած շրջանին, հասարակական ինքնագիտակցութեանը, գրողի տաղանդին եւ այլն: Այս առնչութիւնը, կարճ ասած, զուտ գեղագիտական ինքնութեան հարց է, այն իր մէջ պարփակում է եւ պատմավիպասանութիւնը:

Ընդհանրապէս պատմական թեմատիկայի գեղարուեստական մեկնութեան պատճառը հայ գրականութեան մէջ ազգային եւ հասարակական, քաղաքական կենսի այլաձեւումն է եղել: Սա համընդանուր օրինաչափութիւն է: Գրողը պատմութեանը անորոշարձել է արդիականութեան պահանջով ինչպէս 5-րդ դարում, այնպէս էլ նոր եւ նորագոյն շրջանում, ուստի, ինչպէս ասացինք, զուտ պարագայական խնդիր է, թէ «ինչը» ինչպէս է մեկնում հեղինակը՝ ելնելով եւ իդէական (գեղագիտական) եւ պատմական-ազգային, այն է՝ գործառական իմաստով: Նոյն զուգադիրութեամբ միմեանց փոխարժէքում են գրականութիւնը, ժողովրդի պատմութիւնը, ժողովրդի պատմական իդէալը, որը կարող է ծնուել հասարակութեան պատմութեան ցանկացած ժամանակաշրջանում, եթէ դրա ստեղծողը կայ, տուեալ շրջանում այն խոացումը, որով անհրաժեշտ է մեկնել, փոխաբերաբար, վերարտադրել գոյութեան առեղծոածները, ազգի լինելութեան խնդիրները:

Անգամ այս իմաստով հայ դասական պատմագրութիւնը՝ Խորենացին, Եղիշէն, Փարպեցին և այլոք, որոնք 5-րդ դարում վերաստեղծում էին երկրի պատմութեան անցեալը, ներկան, նախանշում մաքառող ժողովրդի գալիքը, պատմական փաստը վերածում էին խորհրդանիշի, խորհրնակ ընդհանրութեան եւ պատկերի փոխակերպման բազմաշերտ ծաւալումներով գեղարուեստօրէն մեկնաբանում ազգի լինելութեան հիմնախնդիրները, որ մեր ժողովուրդը ձեռք էր բերել միայն պատմական գործողութեան շնորհիւ: Այդ խնդիրներից առաջնայինը հայ ժողովրդի ինքնութեան, պետականութեան եւ քաղաքական անկախութեան, ժողովրդի հոգեւոր եւ ֆիզիկական էութեան՝ իբրեւ գոյութեան երաշխիքի, քննութիւնն էր, որն աւանդօրէն փոխանցուել է դարաշրջանից դարաշրջան:

Հայ արձակի գործառութային այս օրինաչափութիւնը շարունակում է կլասիցիզմի եւ ռոմանտիզմի շրջանում: 19-րդ դարի կէտերին հայ ժողովրդի պատմութեան անցումային այս շրջանում սիրտը «բխոված» Աբովեանը կերտեց մաքառող ժողովրդի, իր ինքնութիւնը, լինելութիւնը, որոնող ժողովրդի կերպարը՝ պատմելով ռուս-պարսկական պատերազմի եւ հայերի ապստաղական պայքարի էպոպեան: Բաֆֆին, շարունակելով դասական շրջանի աւանդները ժամանակի պահանջով գրեց քաղաքական-ծրագրային վէպեր՝ փրկութեան ուղիներ նշելով ժողովրդի համար: Այնուհետեւ, նոյն նպատակով նա դիմում է նաեւ պատմական

թեմային՝ անցեալի քաղաքական դասերը դնելով նոր սերնդի առաջ: Այդ մղումով էր գրում նաեւ Մուրացանը իր «Գէորգ Մարպպետունին»:

Աբովեանն իր «Վերք Հայաստանի» վէպում յայտնաբերում է ժողովրդին՝ իր կենցաղով, հոգեբանությամբ, քաղաքական տենչերով: Բաֆֆին ստեղծում է Հայաստանի պատմական կեանքի իդէալական կողորհորը, քաղաքական լինելության յարաբերությունները, հողը, հողի պոեզիան:

Նորագոյն հայ գրականությունը իր աւանդներով սերտօրէն առնչւում է նախորդ հարիւրամեակներում ստեղծածին, թէեւ տարբեր են նրանց ժամանակագրական պոզադրութիւնները: Գեղարուեստական ընկալման առումով այն միեւնոյն համակարգի ներսում հակադրամիասնութեան եպրեր ունի իբրեւ գրականութեան պատմութիւն, բայց իբրեւ մշակութաբանական գործառնոյթ՝ ժողովրդի պատմական ինքնագիտակցութեան մասն է ամբողջի եւ համակարգի մէջ: Ուստի անորադառնալով 20-րդ դարում ստեղծած գրական երկերի ներքին-միասնական այս օրինաչափութեանը, մենք կը փորձենք վեր հանել երեւոյթի էութեան այսօրինակ համարժէքը:

20-րդ դարը, առանց չափազանցութեան, հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական, թերեւս նաեւ «հարուստ» շրջանն է ինչպէս վերելքների, այնպէս էլ անկումների գնահատութեան եւ վերաբժէքաւորման տեսակէտից: Երկիր Նախրիի հոգեւոր խղճան, որ յառնեց դարասկզբին՝ իբրեւ քաղաքական լինելության համարժէք, նոր ազգային կեցութեան խորհրդանիշն էր, մի պահ մարմնաւորուեց Առաջին համաշխարհային պատերազմի հոչակումով, բայց խորհրդի գոյութիւնը անկում ապրեց 1915-ի եղեռնով եւ բոլշեւիկեան յեղափոխութեան յաղթանակով: Դարասկզբին ինքնութեան տենչով տոգորուած Հայաստանը, այսպիսով, թէեւ կորցրեց ֆիզիկական, առարկայական հայրենիքը, բայց կերտել էր «հոգու հայրենիքը», հոգեւոր Նախրին:

Նորագոյն գրականութեան այս շրջանում այն կերպաւորեց Տէրեանը, այնուհետեւ Չարենցը իր «Երկիր Նախրի» վէպում, որտեղ Խորենացուց եւ Աբովեանից յետոյ՝ իբրեւ դարակապիկ հարցում, թէ՛ «Ով ենք մենք, որտեղից ենք գալիս եւ ուր ենք գնում», վերածնունդ նախ իբրեւ կասկած, այնուհետեւ՝ իբրեւ մեկնութիւն:

Մենք չենք անորադառնալ այն մանրամասներին, որ բազմաշերտ հոգեբանական եւ քաղաքական բարդ իրադրութիւնների վերլուծութիւնն է վէպում, սակայն ստելացնենք, որ (Ս. Ա.՝ «Երկիր Նախրիով») է անցնում հայ նորագոյն վէպի ճանապարհը:

Բոլշեւիկեան վերածնունդը ցարական Ռուսաստանը՝ խախտելով 1918 թուի մարտեան յեղափոխութեան դեմոկրատական աւանդութիւնը, կրկին վերանուաճելով Հայաստանը պատմականօրէն խախտեց այն քաղաքական մոդուսը (վարչաձեւը), որն արդէն հեռագայ տամնամեակներին այլ քաղաքական-հոգեբանական տեսանկիւնով պիտի քննուի եւ գրականութեան եւ պատմութեան մէջ:

Քաղաքական այս մեծ ցնցումները, ներառեալ նաեւ 37-ի նոր եղեռնը, երկրորդ համաշխարհային պատերազմը, պատմական յենակէտեր են, որոնք, թուում է՝ ժամանակ, խաղաղ ստեղծագործական պահ չեն տրամադրում հայ գրողին՝ նայելու ետ կամ առաջ, բայց հոգեկան կուտակման, բեռնացման վիթխարի էներգիան, ազգի լինելութեան ինդիքը, Չարենցի իօսքով ասած, գրողին չեն կարող անջատել օրացոյցից, դարից, որովհետեւ նրա գրած իւրաքանչիւր տողի նժարը դարն է, հետեւաբար՝ պատմութեան կենսապիտոյնը:

30-ական թուականներին այդ մղումով Չարենցը ւստեղծեց «Գիրք ճանապարհին»՝ ժխտելով անցեալի միջերը, փոխակերպումով եւ պատկերի հակադարձումով հաստատման եպրեր որոնելով սակայն պատմութեան քառուղիներում: Սփիւռքում Շահնուրը նոր պատմական իրավիճակի եւ գոյութեան յենակէտերի հոգեւոր էներգիա էր որոնում՝ հնչեցնելով «յարալեւններու» յառնումի մի նոր տեսութիւն: Համաատեղի, Բակունցի երկերում «կարօտի» ոգեղէն կանչերը ասեւ աւելի «պահպանողական էին», դարերով հաստատուած: Թորոմէնցը, Մահարին, Մ. Արմէնը, Զ. Եսայեանը ասեւ նոյն այս շղթայի պուլսը արձագանքներն էին, որոնց

երկերի ենթատեքստում նույն կարգովի եւ նախանշի, ժխտումի եւ յուսադրումի ապգային կենսաաշխարհային էր վերաբարդողում:

Կենսական երկրպագության եր վերաբարտադրում:

Գրական այս վիթխարի դպրոցը, որի ակունքներում, 10-ական թուականներին էր ձևաւորուել Դ. Դեմիրճեանի եւ Սո. Չորեանի արձակը, բնական է, որ ենթարկուում է վերլուծութեան նոյն օրինաչափութեանը: Ստեղծագործական որոնումները 20-րդ դարի վերջին տասնամեակին Դեմիրճեանին մղեցին վերաւերելու 5-րդ դարի Վարդանանց 40-ական թուականներին Դեմիրճեանին մղեցին վերաւերելու 5-րդ դարի Վարդանանց 40-ական թուականներին իր «Վարդանանք» վէպում, իսկ Ս. Չորեանին՝ «Հայոց բերդը», (1944), 60-ական թուականներին՝ «Պապ թագաւոր» եւ «Վարապօտ» վէպերը, որոնք 4-րդ դարի դրամատիկայով յագեցած պատմութեան շրջայի պարզացող հանգոյցներն են: Երկու հեղինակների դէպքում էլ անդրադարձ՝ պատմութեան խորքերում որոնելու ներկայ գոյարանական առեղծները, հիմնաւորուած են արդիական կեցութեան եւ ժողովրդի ներկայի եւ գալիքի մտորումներով: Մանաւանդ, եթէ նկատի ունենանք մեր ժողովրդի գլխին կախուած անկիւնելութեան այն փոսակը, որ կար ինչպէս Երկրորդ համաշխարհային պատերապմի տարիներին, այնպէս էլ յետպատերապմեան տասնամեակներում: Դ. Դեմիրճեանը իր արծարծած ինդիւիդների փոքահեղ լուսնելով 5-րդ դարի պատմութեան մէջ, երբ հայ ժողովուրդը կորցնելով իր պետականութիւնը, այնուամենայնիւ ուներ իր ինքնութեան կիսաանկախ գոյածէր, այսինքն՝ մարդպանական Հայաստանը: Այն ընդունելով իբրեւ գոյութեան նախնական պայման, այլեւս անմահանց մի գոյածէ, Դեմիրճեանը ոգեկոչուում է Վարդանանց եւ Վարդանի, որոնք 451 թուին Տղմուտ գետի ափին, Աւարայրի դաշտում մարտի եղան՝ պաշտպանելու նախնիներից ստանդուած հայրենիքը եւ նրա պատմութիւնը:

Երեւոյթը, ինչպէս տեսնում ենք, ունի պոզաիւեղը ինչպէս 5-րդ, այնպէս էլ հայ նորագոյն պատմութեան շրջանում, եւ 40-ականներին Դանիրճեանը զոյաբանական կենսախարիսիւր որոնում էր ժողովրդի պատմութեան, պատմական կենսահայեացքի դարաւոր փորձում ըլլորտում:

Մտ. Ջորժանը պուգաիեռելով իր վէպերը 4-րդ դարի տեսակետին՝ Արշակի և նրա որդու՝ Պապի պեռականության ամրապնդման, մաքսանան դրամատիկ պատմությանը, նախանշում է հայի գոյաբանական կենսափարփար՝ անկախության գաղափարը իբրև լինելության, իբրև քաղաքական ինքնության կենսաձև:

Եւ Դեմիրճեանը, եւ Չորեանը ընդհանուր այս գոյաշերտում, քննելով պատմութիւնը եւ ներկեան, պատմական աւարակայական այս շերտերում գոյատեւողծում են կենդանի, յարստեղ զենէր, որոնք անհրաժեշտ են ժողովրդի, ազգի կեցութեան համար: Ուստի, այն յենում է ազգի կենսավորձի, ոչ թէ վերացական տրամաբանութեան վրայ¹: Ահա այս իմաստով է Արշակը հիմնում Հայոց բերդը՝

1 Յակոբ Օշականը անդրադարձել է Դ. Դեմիրճեանի «Վարդանանք» և Սոս. Զորեանի «Պապ թագաւորի» վէպերին՝ ասելով. «Էստորոն... կապար դարձաւ ձեռքերուս մէջ եւ աչքերս մտնեցին այլ բառակոյտը»: («Վարդանանքը»- Ս.Ա) (Օշական, Վկայութիւն մը, Բ տպագրութիւն, Պէյրութ, 1981. էջ 30): Զորեանի վէպի մասին Օշականը երկրորդել է՝ «Ի նչն էր որ կը միջամտէր որպէսիկ իրաւ, շքեղ տաղանդէ մը այլ բառակոյտը ծնէր» (էջ 31):

Օշականը գրական դադուր մեկերում մերժուել են քննադատական պառճումները, դասափաստական (վարժապետական) ճառադուրթիները և պոռացող հիացումները, որոնք ձեքճերում խանդավառութամբ հնչող զաղախարական «ձափոռութեք» են ընդամենը: Հարցն այն է, եկեղաբար, որ Օշականը, չանուանելով, նկատի ունի խորիրոպահ պաշտօնական (կուսակցական) քննադատու թիւը: Ինչպէս ինքն ինքն իր քննադատական գործերում արտայայտւում էր, որ «ձափոռութեք» են ընդամենը:

Ինչ վերաբերում է վեպերի՝ փոխանքի և ձախողությունների մեկնաբանությունը, ապա պետք է ստել, որ Օշականի համար արուեստականության ինդիքն ինքնին մերժելի էր համարում, ինչին, ըստ Օշականի, տուրք էին տուել Դեմիրճեանը՝ «Վարդանանքում», Ջորճեանը՝ «Պապ թագաւորում»: Պատմական վեպն, անշուշտ, ինչպես ցանկացած երկ, ըստ էության, «վկայութիւն է» և «խրաւ է», եթէ կրում է «հոգեխառնութիւն մը, ծաւալոյն և հեռատես մտայնութիւն մը, ծանր յոյզի, շատ ընդարձակ ու իրենց արմատները խորերը արձակող և գուցէ անկողնիդէն առնող ապրումներ, որոնք կը նստին երբեմն, հրաքուիքներ չենուած շոգեղէն տարիներուն նման դաշտին, հոս՝ հոգինեւրոն երեսին ու չեն մոռցուիր...» (էջ 5):

(Գ 5): Եթե Օշականեան տեսութեամբ եւ չափանիշներով մեկնաբանելու լինենք Դմիտրիանի վէպը, ապա այդ դէպքում, իրաւ է «Վարդանանքը» վիճարկել, առաւել եւս՝ բառակոյտ...: Օշականը նոյն սկզբունքով մերժում էր եւ Չարենցի «Երկիր Նայիրին» այն իմաստով, որ գեղագիտականը մոռաձածկում

Արշակաւանը, որպէսզի, իր խօսքով ասած՝ «մենք լինենք մեր նեցուկը», իսկ Պապը՝ շարունակելով գերումած հօր գործը, ներքին բարենորոգումների տրամաբանութիւնը կապում է հպատակութեան գծի մերժման հետ, քանզի «օտարի օգնութեան յոյսը նման է ամպի. կարող է անձրեւ տալ եւ չտալ»: Կառուցելով «ներքին բերողը», հոգեւոր պատմանդանին, ինչպիսին Վարապետ թագաւորն է՝ օտարի դրածոյ, որ չգիտի իր մայր լեզուն, հեշտութեամբ ենթարկում է հռոմէացիներին: Իսկ հարեւան հփօր երկրները՝ Պարսկաստանը եւ Բիւզանդիան ինչպէ՞ս են պահում մեր երկիրը իրենց ձեռքում: Նախ եւ առաջ նրանց քաղաքականութիւնը հիմնուած է Հայաստանի ներքին հակասութիւնների հաշուառմամբ: Ըստ Զորեանի քաղաքագէտ հերոսների՝ Արշակի եւ Պապի, երկիրը պիտի կառուցել ներսից, վերածել երկիրը ամուր ամրոցի եւ պետականութեան, գահի իշխանութիւնը հփօրացնել, որպէսզի նախարարը չդաի՝ ամէն պահի կաշառուելով կամ վապելով հարեւան հփօր թագաւորի մօտ՝ ապաւէն փնտռելու եւ ապաստանելու. կառուցելու «ներքին բերողը», որպէսզի ապրել եւ ռամիկը չորոհուի: Պետական շահի այս նախանձախնդրութիւնը, որով հանդէս են գալիս Զորեանի եւ Դեմիրճեանի կերպարները, իւրատեսակ պատմական «իլլուստրացիա» (illustration) են, որոնք խորհրդանշում են հայի գոյաբանական էութիւնը: 40-60-ական թուականներին պատմութեան վերաբժեքաւորումը գործառոյթը ունի հիմքեր ինչպէս կոնկրետ Խորհրդային Հայաստանի, այնպէս էլ այսօրուայ Հայաստանի Հանրապետութեան գոյութեան հիմքում, որ մեզ համար, երեւի թէ բացառութեան կարիք քիչ ունի կամ բացառապէս ընկալելի է պատմութեան հոգեւոր կապի առումով՝ իբրեւ անտրոնիկի կենսագրութիւն, յարատեւ կենսամարտ...:

Այս տրամաբանութեամբ գեղարուեստական երկի գործառոյթը 5-րդ դարի պատմագիրներից մինչեւ Աբովեանը, Բաճֆի եւ Մուրացան, մինչեւ նորագոյն շրջան՝ Դեմիրճեան եւ Զորեան, գեղարուեստորէն աւանդում հոգեբանութիւն է, որով պայմանաւորում է մեր ժողովրդի գոյութիւնը անվախճանական էութիւնը:

Պատմավիպասանն այս տրոհութեամբ մի կողմից գրագէտ է, երբ մարմնաւորում է իր հերոսին, ոչ թէ վերաւերջօրն պատմութեան մանկէներ, միւս կողմից՝ պատմութեան հանրագիտակ, որ ուսումնասիրում է, տեղեւծում, լայն առումով՝ արարում: Դ. Դեմիրճեանի օրինակը ամենից հետաքրքրականն է այս առումով, որ հանդէս է եկել ոչ միայն իբրեւ գեղագէտ, այլ առանձին յօդուածներով անգամ հիմնաւորել իր ընտրած շրջանի պատմագիտական դրոյթները: Իր «Վարդանանց պատերապմը»¹ հետապօտութեան մէջ, «Վարդանանքի մասին»² եւ այլ յօդուածներում գրողը բանավիճելով պատմութեան, իր օպոնենտների (ընդդիմախօսների), ժամանակակիցների, պատմագիրների հետ, առաջադրում է մի քանի կարեւոր տեղեւծներ, որոնք պատմաբանական տեսակէտից շատ բան են պարզում ինչպէս 5-րդ դարի, այնպէս էլ մեր ժողովրդի կենսահայեացքի էլքում, եւ որն անմիջականօրէն առնչւում է իր վէպի՝ «Վարդանանքի» հետ: Գլխաւոր դրոյթներից Դեմիրճեանը առանձնացնում է հետեւեալների. «Նախ՝ Հայաստանը իբրեւ պետականութիւն: Երկրորդ՝ նրա դիրքը իրեն շրջապատող պետութիւնների եւ ժողովուրդների մէջ:

Էր իրարը: Մինչդէռ Օշականի հայեցողութեամբ ճշմարիտ էր, պատկերաւոր ասած, կոսակարանային «յիշատակարանը» եւ ասում էր՝ «թող գէշ ըլլար գրում... բայց «աւելի լայն ու իրաւ վկայէր իր ժամանակը (էջ 5-6)» առիասարակ...: Ուրեմն, ինչպէս էլ հասկանանք ու «կռահենք» Օշականի դրոյթը՝ վերլուծելով Դեմիրճեանին ու Զորեանին, պէտք է համաձայնենք, որ «վարժապետական» քննադատութիւնը անբաժնութիւններ է պիտել եւ, ցաւօք, նրա «տեսութիւնը» անբաժն է այսօր, ուստի խնդիր ոչ թէ Օշականին «մերժել» ու անտեսելն է, այլ նրանով՝ գրականութեան դերի եւ գրական երկի ճիշդ ըմբռնումը եւ այն ժամանակի լայն համակարգում դիտելը, ինչը ծնում է «հոգեխառնութեան» եւ «հեռահաս մտայնութեան»՝ միմեանցով տարրալուծելով (կազմալուծելու) պարագայում, որ տրուում է մեծ տաղանդին եւ ընտրեալին...: Իսկ տաղանդ քէրն ունէին, ընտրեալ էին... Օշականի պէս միայնակները:

¹ Դ. Դեմիրճեան, ՍԳ, 3, 4, 5, 1943 թ. մարտ-մայիս

² Դ. Դեմիրճեան, «Մով. Հայաստան», 1952, հ. 10

Երրորդ՝ Հայաստանի օրիենտացիաների (orientation-ի) խնդիրը: Այնուհետև գալիս է Հայաստանի իշխանությունը ներկայացնող նախարարական տոհմերի այսպես կոչումով կուսակցականությունը խնդիրը: Այստեղ կենտրոնական Վարդան-Վասակեան՝ այսպես կոչումով՝ կուսակցականություն խնդիրը:

Ապա՝ Վարդանանց պատերազմի ծագման եւ վախճանի հետ կապում խնդիրները: Եւ վերջապես՝ հայ ժողովրդի մասնակցությունը քաղաքական դեպքերին եւ նրա ազդեցությունը պատմական դարաշրջանին³:

Իւրաքանչիւր դրոյթ, որ գեղագիտորէն վէպում հիմնադրել է, վերլուծել հեղինակը, նախ իր պատմական բացատրությունն ունի, որոնք Եղիշէից, Փարպեցուց մինչեւ Գարագաշեան եւ Հրանտ Արմէն («Մարպանը եւ սպարապետը» գրքում) եղել են բանավէճի առարկայ: Այս բանավէճի շրջայում Դեմիրճեանը գտել է հիմնականը՝ ժողովրդի պատմության առարկայական հիմքը, որը պետք է գտնել Եղիշէի եւ Փարպեցու գեղարուեստական պատկերներում, հետեւաբար՝ եւ իր «Վարդանանքում»:

Գեղագետ եւ պատմագիր Դեմիրճեանը այս դէպքում իր նախնիների առանդների կողմն է, որի համար փաստը իրերի այսաշխարհային ընկալումն է, իսկ նրա խորքում կայ մի այլ ճշմարտություն՝ հոգեւոր ճշմարտություն: Վերլուծելով աղբիւրները, իր հերոսների պատմական վարքագիծը, Դեմիրճեանը գտնում է Վարդանի եւ Վասակի կերպարում, նրանց դիւանագիտական, ռազմագիտական, սուրստեգիական կողմնորոշումներում ժողովրդի գոյության առեղծուածը, այն է՝ ինչպէս Հ-ի ինքնության, այնպէս էլ կուսակցականության, օրիենտացիայի բուն իմաստի եւ Աւարայրի ճակատամարտի եւ պատերազմի վախճանի հարցերի պատասխանները:

Ըստ այդմ՝ հայ ժողովուրդը մղում էր Հայրենական պատերազմ, որն ուներ ոչ միայն կրօնադաւանաբանական ուղղություն, այլեւ՝ գոյաբանական: Ուստի Վարդանի եւ Վարդանանց գործողությունները տրամաբանուած են այդ ելրագծով: Վարդանը իր էությանը ներառում է հայ ռամիկի, հայ հոգեւորականի, երկրի ապատության, ինքնության գաղափարը: Իր մէջ տրոհելով նրանցից իւրաքանչիւրի շահը, անհրաժեշտ պահին կարողանում է այդ շահերը նպատակաւորողել, երկրի գոյությունը պահպանել, փրկել նրա գոյության խարխիւր՝ ինքնությունը, կուլտուրան, ապատությունը: «Այն, ինչ աւանդ ենք առացել մեր նախնիներից, մեր հայրենիքը, մեր իշխանությունը, ապատությունը – դա չենք տալ ոչ ոքի»: Սա է ելրաբանական առաջին հանգոյցը, որով տրամաբանուած են Վարդանի դիւանագիտական միւս գործողությունները՝ սկսած Արտաշատի ժողովից, որտեղ Վարդանը մասնակցում է Յապկերտին գրուելիք պատասխանին, Տիպրոնում՝ արեւաց արքայի պալատում, Անգղի ճակատամարտում, Աւարայրի դաշտում եւ այլն:

Ըստ վերը նշումով կառուցուածքի, որի իմաստը գնալով ծաւալում է վէպում գրողը, երեւում են նաեւ Վարդանի բոլոր գործողություններում: Պատերազմն անխուսափելի էր, ուստի 5-րդ դարում հօր Պարսկաստանը, որն իր գերիշխանությունն էր հաստատել մեր տարածքում, պետք է փակեր նաեւ դիւանագիտական եւ սուրստեգիական այն սահմանները, որտեղից Հայաստանին օգնական ուժ կարող էր գալ: Յոյները, որոնք կրօնակից են, այս դէպքում թույլ են՝ պետք է սատարէին հայերին: Ուստի Վարդանը դիմում է նրանց օգնությանը, թէեւ կանխատեսում էր, որ այդ օգնական ուժը չի լինելու: Երկրորդը՝ հարեան երկրները՝ Աղուանքը եւ Վրաստանը, որ ենթարկուելու էին նոյն հարուածին, բնական է, որ դաշնակից ուժ կարող էին դառնալ: Վերադառնալով Տիպրոնից, Անգղի ճակատամարտում ջարդելով պարսիկներին, Վարդանը նախապատրաստում է երկիրը գալիք ճակատամարտին: Նախապէս Ներշապուհ Արծրունուն ուղարկելով դէպի Ատրպատական, որտեղից կարող էին ներխուժել պարսիկները, Վասակին թողնելով Այրարատում, ինքը ճանապարհում է դէպի Աղուանք, որտեղից Յապկերտը պիտի փակեր հայերի թիկունքը: Հարուածելով այնուհետեւ Սեբուխտին, ապառազելով Աղուանքը, Վարդանը բացում է նաեւ ռազմավարական ճանապարհը՝ ճորա պահակը, որտեղից հոները արշաւում էին պարսիկների վրայ: Դաշնակցելով այնուհետեւ քոշանների եւ Աթըլի հետ,

³ Դ. Դեմիրճեան, Երկեր, հ. 12, Ե. 1985, էջ 312

վերադառնում է երկիր, ուր ձմեռելուց յետոյ պիտի մղուէր հիմնական ճակատամարտը՝ Աւարայրը:

Դեմիրճեանը այսօրինակ դիւանագիտութեամբ պատասխանում է մի հիմնահարցի, որ կուգորդուի է օրիէնտացիայի գաղափարին: Եթէ աւանդաբար Վարդանանց մարտը կրօնադաւանաբանական պատերազմ է, ապա դա նշանակում է՝ նախ՝ այն իր հիմքով սերտօրէն առնչուի է հայ պետականութեան եւ ինքնութեան գաղափարին, եւ վէպի հոգեւորական եւ փիլիսոփայ կերպարները՝ Եփեմը, Եղիշէն, Խորենացին հայ պետականութեան յենարաններն էին: Միւս կողմից, նրանց պայքարը սերտաճելով ժողովրդի ինքնութեան պայքարին, այն հաշուի է առնուած իբրեւ հոգեւոր կողմնորոշում: Ինչու՞: Եթէ հայոց ինքնութիւնը ունի գաղափարական հիմք, ապա այն կուլտուրական ինքնութեան պայքար է քրիստոնէական դաւանաբանութեան միջոցով: Բայց դա բաւարար չէր եւ չէր էլ կարող լինել: Ըստ Դեմիրճեանի: Վարդանի եւ Վասակի քաղաքական եւ ռազմական դիւանագիտութեան մէջ գրողը յայտնաբերում է տարրեր, որոնք վկայաբանում են Վարդանի այն առաւելութեան մասին, որով պայմանաւորուած է իբրեւ պետական գործչի նրա տիպը: Իբրեւ օրինակ կարող է լինել հետեւեալը՝ Վարդանը դաշնակցում է եւ հեթանոս հոնէրի հետ եւ քուշանների, որոնք կարող էին այդ պահին ձեռնադրուի լինել երկրի շահերին, միաժամանակ պահպանել հայ կրօնի, այսինքն՝ կուլտուրական ինքնութեան շահերը: Հետեւաբար վէպում նա կերտում է ոչ թէ մարտիրոսի, այլ լուրջ պետական գործչի կերպարը:

Վասակն այս առումով տարողնուող տիպ է: Համեմատումը կարող է պարզել ճշմարտութիւնը, այսպէս՝ Վասակը երկրի առաջին դէմքն է, Վարդանը պատերազմել է պարսկաց բանակում, քուշանների դէմ մարտնչել, բայց երբ պարսիկները խախտում են մեր երկրի ստատուսը, նա իր բազմափորձ սուրը ուղղում է իր երկրի թշնամու դէմ, որի բանակում մկրտուել է նաեւ ինքը: Աւելին, եթէ երկրի շահը պահանջում էր, առերես հաւատափոխութիւն ընդունելով Տիգրանում՝ ժամանակ շահելու ականկալութեամբ, հիմնաւորուած փաստ է, որով ժխտում է Վարդանի միագծութիւնը, աւարտուն, պատրաստի հայրենասէր տիպի գաղափարը:

Վասակը՝ իբրեւ եասկենտրոն պետական գործչի կերպար, հիմնաւորուած է իր գործողութիւններով: Նա վարում է ոչ թէ պարսկամէտ օրինաւորացի (կողմնորոշման) գիծը, այլ շարժում է դիւանագիտօրէն, երկրի ուժերը կազմալուծելու քաղաքականութիւն վարում: Ոչ առարկայական, պատմականօրէն սիւսլ այս ըմբռնումը, որ հաշուի չէր առել ոչ պատմութեան դասերը, ոչ էլ իր ժամանակի խաւերի շահերը՝ առաւել ցայտուն գործի դնելով՝ պետականութիւնը պահպանելու առումով, դատաւարաւորեցին նրան ձախողութեան: Աւելին, ժողովուրդը նրան ճանաչեց իբրեւ դաւաճան: Միւս կողմից, նրա քայլերը նպատակեցին յոյների հետ դաշինքը խլելուն, բիւզանդական հատուածի հայ նախարարների չէկոքութիւնը ապահովելուն, որպէսզի թշնամին՝ Պարսկաստանը, Վասակի դիւանագիտական քայլերը օգտագործի հայաստան երկրի ուժերը ջլատելու, ոչ թէ համախմբելու, որն այնքան անհրաժեշտ էր Վարդանին: Աւելին, Վասակը երկիրը գլորում էր քաղաքացիական պատերազմի անդունդը, որից դիւանագիտօրէն խոյս էր տալիս Վարդանը: Ուստի, եպրակացնում է Դեմիրճեանը. «ոչ պարսկական եւ ոչ էլ յունական օրիէնտացիան, այլ իր ժողովրդի օրիէնտացիա, պայքար՝ պաշտպանելու այն թեկույ կիսանկախ պետականութիւնը եւ հայ ժողովրդի ինքնորոշութիւնը, կուլտուրան: Ահա Վարդանի օրիէնտացիան...»¹: Հետեւաբար եւ՝ ժողովրդի օրիէնտացիան:

Այսպիսով, գրողը, ինչպէս Վարդանի տիպը վէպում, նրա վարքով քննում, վերալուծում, դատում է, նրանով է առաջ մղում ժամանակի այն հարցադրումները, որոնց շարքում, իբրեւ վերջինը, նշենք Աւարայրի ճակատամարտի վախճանի իմոյիւրը: Դեմիրճեանը «Վարդանանց պատերազմը եւ նրանց մղած ճակատամարտը» յօդուածում այն վերլուծում է մանրամասնօրէն, որը թէեւ դա չենք անի, սակայն կ'ընդգծենք այն պարմանակի ընդունակութիւնը, որով բնութագրում են հսկայական ռազմագիտութեան ինդիւիդների իմացութիւնը: Վարդանի եւ հայ ռազմական ուժերի դարաւոր տակոյիկան

¹ Դ. Դեմիրճեան, Երկեր, հ. 12, Ե., 1985, էջ 329

արագ եւ անսպասելի յարձակումն է փոքր ռազմական ուժերով, արագ ետքաշումը եւ ակտիւ պաշտպանությունը, որով պայմանադրուած էր նաեւ Աւարայրի պաշտպանությունը: Թշնամին Նիւսալաուրտ Կորավարի գլխադրութեամբ արշաւում էր երկրի սիրտը, սակայն Վարդանը իր Կօրքով եւ ժողովրդական ուժով հարուածեց, խոցեց թշնամուն, թէեւ ինքն էլ Կոհուեց, բայց պարսկաց բիւր բանակի եւ անմահների գնդին անակնկալի բերեց: Շատ է քննուել Աւարայրում յաղթուելու, ինչպէս եւ՝ միագիծ բարոյական յաղթութեան մասին, որոնք նոյնքան կեղծ են, որքան Վասակի պատմական արդարացումներ: Ինչպէս Աւարայրը, որ միօրեայ ռազմական գործողութիւն է, այնպէս էլ հայերի ետքաշուելը լեռներ եւ պարտիզանական պայքարը, նոյն ճակատամարտի դարաւոր շարունակութիւնն է, որն աւարտուել է թշնամուն խոցելով, հետեւաբար՝ ռազմական յաղթանակի արժէք ունի, որ պիտի աւելի լաւ հասկանան երկրի ռազմագէտները: Դեմիրճեանը այն համարում է «ակտիւ պաշտպանութեան ստրատեգիա», որի մասնակիցը ժողովուրդն է, հայոց պատմությունը, հայոց դարերը... այսօր՝ Արցախը:

Դեմիրճեանը «Վարդանանք» վէպը կերտել է առհասարակ կենսական հարուստ լիցքով: Ըստ Ս. Աղաբաբեանի այս վէպի «ստրուկտուրան»՝ «հող, հատիկ, հաց» միասնութեան առանցքն է, որ, Օշականի լեզուով ասած, «հոգեխառնութեան», դրամատիկական ապրումի եւ ժողովրդական կենսահայեացքի դարաւոր իմաստութեամբ է ծնուել: Ուստի՝ ««հողից» դէպի «հատիկ», «հատիկից» դէպի «հաց» ձգուող տարածությունը, - Աղաբաբեանի ճիշդ բնորոշմամբ, - ժողովրդական աշխարհի «տիեպերքն է»»,¹ ուր ապգային-քաղաքական եւ մարդկային գոյութեան կոշիւը միասնաբար ընկալում է, Իսահակեանի բնութագրմամբ, իբրեւ «ապստամբութեան, ապստ խղճի եւ կեանքի կոշիւ»:²

ՍՈՒՐԵՆ ԱՔՐԱՀԱՍԵԱՆ

¹ Ս. Աղաբաբեան, Հայ Խորի. Գրականութեան պատմութիւն, Երեւան 1986, էջ 389

² Տե՛ս անդ , էջ 389

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Գէորգ Լոռեցի Եպիսկոպոսի Նամակը

Գէորգ Լոռեցի Եպիսկոպոսի (+1072) այս պատասխան նամակը ուղղուած է Ասորւոց Անտիոքի Պատրիարք Յովհաննէս Բաշուշանի (1064-1073), որ իր գրութեամբ քննադատած է Հայ եկեղեցւոյ քանի մը սովորութիւնները իբրեւ հակականոնական: Գէորգ Եպիսկոպոս հմտօրէն կը պաշտպանէ մեր եկեղեցւոյ հնաւանդ սովորութիւնները: Այս գրաբար-նամակը շահեկան ըլլալուն, զայն կը ներկայացնենք աշխարհաբար թարգմանութեամբ: Թարգմանութեան համար օգտագործած ենք գրաբար բնագիրը՝ առնուած Երուսաղէմ տպուած (1994) Գիրք Թղթոցէն:

Գիրք Թղթոցը Հայ եկեղեցւոյ կանոնական եւ դաւանաբանական պաշտօնական գրութեանց այն հաւաքածոն է որ սկիզբ առած է Անիի Հայոց Հայրապետանոցին մէջ եւ իր կազմութիւնը կը պարտինք Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսին (+728): 711 էջերէ բաղկացած այս Գիրք Թղթոցը կը սկսի Երուսաղէմի Մակար Հայրապետի (324-333) կանոնական նամակով՝ ուղղուած Հայոց Տէր Վրթանէս Եպիսկոպոսին: Գիրք Թղթոցի գրութիւնները ղետեղուած են ժամանակագրական կարգով, եւ Գէորգ Լոռեցիի այս նամակը ղետեղուած է 624-656 էջերու մէջ:

Նամակը երկար ըլլալուն, զայն բաժնեցինք ենթաբաժանումներու՝ Բաղարջ Հաց, Անապակ գինի, Ուաչ օրհնել, Օրուան սկիզբը, եւ, Մնունդ եւ Աստուածայայտութիւն, որպէսզի դիրին ըլլայ հետեւիլ այդ նիւթերուն:

Հայոց Տէր Գէորգ Եպիսկոպոսի եւ Հոգեշնորհ
իմաստասէրի պատասխան նամակը
Ասորւոց Յովհաննէս Պատրիարքին
(1064-1073)

Աստուածապարգեւ Տէր Յովհաննէս՝ Ասորւոց Հովտապետիդ եւ մեծապատիւ Պատրիարքիդ սիրոյ գրութիւնը եւ ողջոյնի նամակը կարգացի եւ՝ Աստուծոյ նուաստ ծառայ՝ Տէր Գէորգ Հայոց Եպիսկոպոս, եւ տեսնելով անոր մէջ սիրոյ արծարծումը, եւ ունեցայ մտքի զուարթութիւն եւ բերկրութիւն, եւ օրհնեցի բարեխնամ Աստուած, որ չպակսեցուց իր գթութեան ողորմութիւնը իր արարածներէն, այլ միշտ թափեց զայն որպէս առաւօտեան ցօղ եւ իբրեւ արեգակի լոյս, որով սրբուելով կը պայծառանան Անոր հաւատացող անձեր եւ կը բերկրին բազմաթիւ մարդիկ, եւ (այսպիսով) կը կատարուի Արարիչին սիրոյ կամբը մարդոց մէջ, որ ըսաւ, "Սիրեցէք զմիմեանս, որպէս եւ սիրեցի" (Յով. ԺԳ. 34), եւ դարձեալ թէ՛ "Որ սիրէ զիս զպատուիրանս իմ պահեցէ": (Յով. ԺԳ. 15, 21): Եւ Անոր պատուիրանները անոնք են, որ մարդիկ զիրար Հոգան Հոգեւոր սիրով եւ հաւանութեամբ (ընդունելով), մինչեւ որ բոլորս Հասնինք կատարեալ չափահասութեան՝ Աստուծոյ որդի Քրիստոսին, միաձին Բանը Աստուծոյ, որ ելաւ Հօրմէն՝ իր ծնողին կամքով եւ հաճութեամբ, եւ եկաւ սերմանելու մարդոց